ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/22

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Մասնակից՝ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1370-2020 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 04.02.2020թ.-ի թիվ ԱՍ/06.3/1760-2020 գրության հիման վրա, 04.02.2020թ.-ին «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 04.02.2020թ.-ին և 05.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ, իսկ 11.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ առողջապահության նախարարությունը 04.02.2020թ.-ի թիվ ԱՍ/06.3/1760-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2811/1 գրության համաձայն, վերջինս չի հրաժարվել պայմանագրի շրջանակներում մանկական կերի մնացորդային քանակի մատակարարումից, դեռ ավելին հավաստիացրել է, որ մինչև 2019 թվականի վերջ մատակարարումը կիրականացվի, այդ իսկ պատճառով պայմանագիրը չի լուծվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են 2019 թվականի մարտի 19-ի ՀՀ առողջապահության նախարարության և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» պայմանագրի, նշված պայմանագրի շրջանակներում կողմերի միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրությունների, ինչպես նաև «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին ուղղված գրությունների և ստացված պատասխանների պատճենները:

3. **<u>«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 05.02.2020թ.-ին. գրությամբ դիմել է «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1370-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայանցել հրավիրված նիստին՝ չներկայացնելով գրավոր կարծիք:

4. <u>ՍՑ-LO-2020/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի միջև 19.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ առողջապահության նախարարությունը 08.11.2019թ.-ին թիվ ԱՍ/22.2/18446-19 գրությամբ դիմել է «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի և հայտնել, որ 2019 թվականի մարտի 19-ի կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» ծածկագրով պայմանագրի հիման վրա Մասնակցի կողմից պետք է մատակարարվեր՝

1. «Ֆենիլ ալանին զպարունակող մանկական կեր 1 տարեկանից բարձր երեխաների համար, սպիտակուցի պարունակությունը 40%-ից բարձր» մանկական կերը հետևյալ քանակություններով՝

1) 2-րդ եռամսյակ-75000 գրամ
2) 3-րդ եռամսյակ-85500 գրամ

2. «Ֆենիլ ալանին զպարունակող մանկական կեր մինչև 1 տարեկանից բարձր երեխաների համար, սպիտակուցի պարունակությունը 12%-ից բարձր» մանկական կերը հետևյալ քանակություններով՝

1) 2-րդ եռամսյակ-16100 գրամ
2) 3-րդ եռամսյակ-47250 գրամ

Վերոնշյալ մանկական կերերը ըստ նշված քանակների մինչև այժմ չեն մատակարարվել:

Անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում կատարել թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» պայմանագրով սահմանված պարտականությունները, այլապես Պատվիրատուն, օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով, ստիպված կլինի ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Ի պատասխան վերոնշյալ գրության, Մասնակիցը 28.11.2019թ.-ի թիվ 2811/1 գրությամբ հայտնել է, որ թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» պայմանագրի շրջանակներում նախկինում մատակարարված ֆենիլալանին չպարունակող մանկական կերի դիմաց չի ստացվել գումարը, որը կազմում է 210 943.35 /երկու հարյուր տաս հազար ինը հարյուր քառասուներեք դրամ երեսունհինգ լումա/ ՀՀ դրամ:

Մասնակիցը խնդրել է փոխանցել չվճարված գումարը, քանի որ «Կոմիդա ՊԿՈՒ Բ» ֆենիլալանին չպարունակող մանկական կերը «Կոմիդա ՊԿՈՒ Ց Ֆորմուլա» ֆենիլալանին չպարունակող մանկական կերով փոխարինելու խնդրանքը եղել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ի դեպ, տվյալ խնդրանքը հնչեցվել է շատ ուշ, միայն «Կոմիդա ՊԿՈՒ Բ» ֆենիլալանին չպարունակող մանկական կերի մատակարարման ժամանակ, ուստի պահանջվել էր լրացուցիչ ժամանակ խնդրանքը բավարարելու և «Կոմիդա ՊԿՈՒ Ց Ֆորմուլա» ֆենիլալանին չպարունակող մանկական կերի մատակարարումը կազմակերպելու համար: Տեղեկացվել է նաև, որ ֆենիլալանին չպպրունակող մանկական կերի մնացորդային քանակի մատակարարումը կիրականացվի մինչև այս տարվա վերջ:

Ի պատասխան «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի վերոնշյալ գրության, Պատվիրատուն 06.12.2019թ.-ի թիվ ԱՍ/22.2/23092-2019 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով սահմանված ֆինանսական համակարգում պարտավորության ներմուծման օրը սահմանված է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը, ուստի անհրաժեշտ է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը ներկայացնել Ֆենիլալանին չպարունակող մանկական կերերի հանձման-ընդունման արձանագրությունները և հարկային հաշիվները՝ սահմանված կարգով գործընթացը կազմակերպելու համար:

www.gnumner.am համացանցային կայքում թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում չի հրապարակվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1370-2020 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է

պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի միջև 19.03.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2-6» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ առողջապահության նախարարության կողմից միակողմանի չի լուծվել, ինչպես նաև www.gnumner.am համացանցային կայքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում նույնպես չի հրապարակվել:

Պայմանագրի 8.10 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև կնքված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/2» ծածկագրով պետական գնման այմանագիը միակողմանի չի լուծվել, ինչպես նաև պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից չի հրապարակվել տեղեկագրում՝ www.procurement.am (www.gnumner.am) կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Պայմանագրի 8.10 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ

նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1370-2020 գրությամբ «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/22 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**